

դարձնելով իր իսկական նպատակը, զվարճություն օգնություն է հանում միայն իմ ընդհանրա- նի տարածած (իսկ իմ կողմից հերքած) լուրը, իր կողմից էլ հաւատարմացնելով թէ «չառ լաւ յի- շում եմ (հովհաննիսեանց), որ ինքը էմինը մի- անգամ (sic!) ի միջի աշխարհ յայտնեց ինձ, թէ վաղուց պատրաստած ունի մի գրութիւն Հայոց նախարարների մասին»։ (Արձագանք, № 115)։

Պ. Խաչատուր Գովհաննիսեանցը նա է, որը ուղղել էր «Արձագանքի» 102 և 103 հա- մարներում իրեն պատասխան իր հրատարա- կած «Եղիշէի» մասին գրած ընդարձակ քննա- դատութեան (Արձագանք, № 6)։—մի գրադարու- թիւն, որ հազիւ լոյս տեսած, փշուկայ իր իսկ հնարովի գլխին, «Մշակի» 102-րդ համարում հրատարակած պ. Ս. Մալխասեանցի կարծի և ազդու բացատրութեամբ Նոյն իսկ այդ գրադար- անութիւնը տարօրինակ կերպով հիւրասիրող լրա- գիրը ձեռք քաշեց իր աշխատակից պ. Խ. Գով- հաննիսեանցից՝ հրաժարելով հաւատ ընծայել սրա՝ իմ անձնագրութեան դէմ ուղղած գրու- թիւններին (Արձագանք, № 104)։—Ես մինչև անգամ աւելորդ համարեցի պատասխանել այդ պարոնին, —այնքան աշխարհ էր գրադարութիւ- նը։

Ահա թէ մի է պ. Գովհաննիսեանցը։—Այսու ա- մենայն՝ շնորհաւորում եմ պ. Ս. Եղիազարեան- ցի այսպիսի բարձրագույն դասնակցութիւնը, յուսա- րով, որ թէև նրանք երկուսը այժմ միացնեն—մե- կը՝ իր հաղուած գիտ յիշատակները և միւսը՝ իր բողոքական երեսակայութիւնը։—ամենակարճ միջո- ցում և ամենափայլուն կերպով գրուել կը բերեն պ. Եղիազարեանցին այս օրերս հրապարակուեալ արած իմ առաջարկութիւնը, այն է՝ առանց յետաձգելու հաղորդել ի գիտութիւն ա- մենայն նախարարութեան մասին էմինը իբր թէ պատրաստած փոքր և ճշգրիտ աշխատան- քի գլխաւոր և էական կէտերը և նրա համառօտ և ամբողջ բովանդակութիւնը—այնպէս, ինչպէս իրանք լսել և ունել են էմինից։—Պա- տուելի պարոններ պէտք է իմանան, որ սրանով մի ահազին և անմոռաց ծառայութիւն մատու- ցած կը լինեն զաւրդ սերունդներին՝ զոնք այդ ե- դանակով ամուլիտ պահպանելով էմինի ճեռա- գիւր աշխատանքի ամբողջ պարունակութիւնը, ո- րի երբ և ինչ գոյութիւնը հերքում են ուրիշները։

Ի բոլոր սրտէ մաղթելով նրանց լիակատար ա- ջողութիւն այս ազդեցութեամբ գործունէ, կը սպասեմ անհամբեր նրանց հետաքրքիր աշխատութեանը։

Պ. Խաչատուր

ՆԱՍՏԱԿ ԽՍԲԱԳԻՐՆ

Թիֆլիս, 2 Նոյեմբերի «Մշակի» անցեալ համարում յայտնած այն

պիէսայի ներկայացումը, այդպիսով հանգուցեալ գլուխը կենդանութեան ժամանակ ինքնակոչ դա- տաւորներ հանդիսանալով նրա գրողանքների վրա, այդ իսկ պիէսան անաւելի, դուրս և անվայել գտնելով հայոց բնի միա ներկայացրած լինելու համար, կամ ընդհանրապէս Պատկանանի այդ երկու բարեկամները սր ու ու էին ուղղում որ պիէսան ներկայացվել, բայց այն ժամանակվայ հայոց թատրոնական կոմիտէի միւս անդամնե- րը, մեծամասնութիւն կազմելով՝ վճռեցին Ստե- փանիսեանցի և Գովհաննիսեանցի կամքի դէմ (որոնք երկուսով փորձառամտութիւն էին կազմում), պիէ- սան երբեք չը ներկայացնելու ինչ և ինչ, բայց պիէսան երբեք էլ բեմի վրա չը դրվեց։

Այնուհետեւ ում ձեռքում էր ձեռագիրը, —մի- յայտնի չէ՝ Հանգուցեալի այլիմ ասում է որ «Արձագանքի» խմբագիր՝ ձեռքում էր, և հան- գուցեալ իր մահից մի երկու, երեք տարի ա- ռաջ յետ պահանջեց ընագիրը և ինքն իր ձեռ- քով ողջագրեց։ «Արձագանքի» խմբագիրը ստում է Կիսկիսեանց ասածները, հաւատացնում է որ ձեռագիրը մինչև այժմ իր ձեռքումն է և հանգուցեալը երբեք իր կարծիքը պիէսայի և նրա մէջ հանգեցնելու անձնաւորութիւնների մասին փոխած չէ և մինչև այս տարակից փետրվար ամիսը ստատիկ ցանկա- նում էր որ պիէսան եթէ չը ներկայացվել էլ, գո- նէ անպատճառ տպագրվի։

Այստեղ ակամայ գրվում է հետեւեալ հարցը. երբ թատրոնական կոմիտէի ձեռքից ընագիրն անցաւ մամուլը անձանց ձեռքը, Գովհաննի- սեանի կամ Ստեփանիսեանի ձեռքը, —այդ ինչպէս է եղել, որ տառն և երկու տարի չարժանի, չը

միտքը, թէ հարկաւոր է այժմ և եթ ըրօշխներ պատրաստել խօշրայի վերաբերմամբ գիւղական ընկերացանութեան համար—մի վերին աստիճանի համակրելի միտք է, որը վաղուց արդէն յղացած է իմ մէջ։

Քաջակրկնած այն ներուշխն և չափազանց սիրալիր ընդունակութիւնով, որին արժանացան «Մշակում» իմ լոյս տեսած և էջմիածնում առա- ձին ըրօշխնով արտատպւած գրութիւնը «Խօշ- րայի մասին», և հաւատարմ լինելով, որ նրանց ընկերացանութիւնը անողոտ չէ անցել ժողո- վրդի համար, ես մտադիր եմ շատ կարճ միջո- ցում ներկայացնել Հրատարակչական կամ Բարե- գործական ընկերութեանը մի աւելի ևս հանրա- մատչելի գրքիկ խօշրայի մասին ստակ գիւղական ազգաբնակչութեան համար։ Կը խնդրեմ նոյն- պէս Ս. էջմիածնի հոգեւոր կառավարութեանը իմ ըրօշխնի երկրորդ տպագրութիւնը տալ, զուցէ մի քանի աւելացումներով, աւելի զարգացած դա- սի համար։

Բացի այդ ես մտադիր եմ յունկար ամսից ձեռնարկել թարգմանելու Ֆրանսերենից մի նո- րագրիս առ ողջ ապագայ հոգի և ան ձեռնարկ և նոյնպէս ներկայացնել Հրատարակչական ընկե- րութեանը՝ մեծ քանակութիւնով լոյս ընծայելու և եթէ ոչ ձեր, գոնէ ամենայնքան դնով տարա- ծելու։ Այս օգտաւէտ գործը գլուխ բերելու հա- մար ես չեմ երկմտում ոչ Բարեգործական ու Հրատարակչական ընկերութիւններին և ոչ Ս. էջ- միածնի աշակցութեան մասին։ Ես չեմ յիշում, ի հարկէ, իմ ընկերակից բժիշկների գիտական օգ- նութիւնը, առանց որի ես անկարող կը լինեմ ոչինչ անելու։

Բժ. Վ. Արծրունի

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԻՆ

«Մշակի» ներկայ համարում բաց ենք անում մեր լրագրի եկող 1893 թվի համար բաժանորդ- դատարկութիւնը, և ինչպէս ամեն տարի էինք ա- նում, «Մշակի» ներկայ համարի հետ ուղարկում ենք Թիֆլիսից դուրս գտնվող մեր բոլոր բաժա- ները, տպւած նամակներով, որպէս զի հեշտաց- նանք ցանկացողներին՝ բաժանորդ գրվել «Մշա- կին»։ Խնդրում ենք որքան հնար է շտապել բա- ժանորդագրութիւնը վերանորոգելու։

Խնդրում ենք մեր այն բաժանորդներին, որոնք դեռ ես չեմ հասցրել անցեալ բաժանորդագրա- կան վճարը, շտապել ուղարկել «Մշակի» խմբա- գրութեանը իրանց վրա մնացած պարտքը։

Եվ չնայելով Բերն քաղաքի մի հայ ուսանող գրում է մեզ հոկտեմբերի 10-ից (նոր տոմարով)

նայելով որ հանգուցեալ խնդրում աղաչում էր որ պիէսան տպագրվի, նրա երկու մտերիմ բարե- կամները այդ տառն և երկու տարեկան ընթաց- քում այնքան խտասիրտ գտնվեցան, որ չուզե- ցին յարգել իրանց բարեկամի փափաքը, քանի որ այնուհետեւ տպագրելը իրանցից էր կախված, և ոչ թէ առաջվայ պէս մի ամբողջ կամեալի մեծամասնութեան որոշումից։ Խնդրեմ Պատկանեան խնդրում է Գովհաննիսեանին, նամակներ է գրում Ստեփանիսեանցին, աղաչելով որ «Առաւել» տը- պագրվի, —իսկ նրա այդ սրտակից բարեկամները այն աստիճան խտասիրտ և բարբառոս գտնվե- ցան, որ ամբողջ 12 տարի չարժանի չուզեցին այդ տեսակ չափն ուրախութիւն, այդ տեսակ ան- նշան դուրսբերութիւն պատճառել հեղինակին, տը- պագրելով «Արձագանքի» էջերում յիշեալ դըր- ուածը։...

Բայց հենց որ մտնում է բանաստեղծը, գըր- ուածը անմիջապէս տպագրում է։ Պէտք է ըն- դունել, որ կամ արդի ասածը ճիշդ է, որ հանգու- ցեալը ողջացրել էր գրուածը, այդ պատճառով նրա այդ սրտակից բարեկամները զիտնալով այդ հանգամանքը, չէին համարձակվում տպագրել պիէ- սան նրա կենդանութեան ժամանակ, թէկուզ ի- րանց ձեռքումն էլ լինէր գրուածը պատճէնը, կամ պէտք է ընդունել որ հանգուցեալն ինքն պատուի- րել էր իր կտակով տպագրել «Առաւել» իր մահից յետոյ միայն։ Սակայն ընտանեկ հաւատարմատար Գ. Չախուշեան վկայում է որ Պատկանեան կտակ չէ թողել, իսկ այն հանգամանքը որ «Արձագա- նի» համարները խմբագրութիւնը դադարեցրեց ժառանգներին ուղարկել՝ ամենալու ապացոյց

հետեւեալը. «Որիտեղ վարդահի Գալոսեան, որը վերջացրել է իր ուսումը այստեղի համալսարա- նում և արժանացել է փիլիսոփայութեան դոկտո- րի աստիճանի՝ այսօր ուղևորվեց դէպի իր հայ- բնիկը, Կովկաս։ Նորաւարտ հայունի ուսում- նականին ցանկանում ենք կատարեալ աջողու- թիւն իր ապագայ գործունէութեան մէջ»։

«Хар. Губерн. Вѣд.» լրագիրը հաշու է պաշ- տոնական թանկանների հիման վրա, որ այս տա- րի, խօշրային էլ պիէսայի տպագրւած մինչև այ- սօր, ուսուցիչ կայսրութեան մէջ խօշրայից մե- ուկ են ընդամենը 220,122 հոգի։

Վրաց «Իվերիա» լրագիրը հաղորդում է որ Միւսամեդլարովի գիւղատնտեսական դպրոցի աե- սուշ նշանակված է պ. Զաւայով, որն իր ու- սումը ստացել է Նովո-Ալեքսանդրիայի գիւղատն- տեսական բարձրագոյն դպրոցում։

Երկար երաշտութիւնից յետոյ ԹԻՖԼԻՍԻՍԻՍ ակադեմիան անձրեային եղանակները։ Յիշել փողոց- ներում անտանելի է լինում այդ տեսակ եղանա- կի ժամանակ։

Մեծ-ՎԱՐՍՖԻԼԻՍՍԻՍ մեզ գրում են, թէ խօ- լերան, որն արդէն դադարել էր այդ գիւղում, սեպտեմբերի վերջերից կամ հոկտեմբերի սկզբնե- րից՝ նորից երևաց Մեծ-Վարաքլիսայում։ Եւ ու- ղիվ այդ վտանգաւոր ժամանակ բացվել են դիւղի երկուսը դպրոցները, որոնց 250 երեխաներ են սովորում։ Հետեւեալ համարները մինւում կը աը- պագրենք Մեծ-Վարաքլիսայից այդ մասին ստա- ցած նամակը։

ՎԼԱԴԻԿԱՎԼԱՍՈՅ մեզ գրում են որ այդ քա- ղաքի հայոց ծխական-միլիտանտ երկուսու ուսում- նարանների նիւթական վիճակը միանգամայն ան- միջոքար է։

Սարգսաւաք Գ. Նազարեանց այս օրերս հրատա- րակեց ԹԻՖԼԻՍԻՍԻՍ Ժողովրդական ընկերացանու- թեան համար «Երեսու Գրիտոսի Միլիտանտ» վերնադրով փոքրիկ գրքիկը։ Տպւած է Մ. Շախա- ձէի տպարանում և արժէ 8 կոպէկ։

Ուսուցիչ լրագիրները հաղորդում են, որ հին ձեռն ուսուցիչ թղթագրամները չըլանաւորութեան ժամանակամիջոցը լրանում է արդէն եկող 1893 թվի յունվարի 1-ին։ Ուրեմն երկու ամիսից յետոյ, այսինքն յունվարի 1-ից սկսած, այդ փողերը այլ ես ոչ մի տեղ չեն ընդունվի։

Մեզ գրում են Զաքարիայից, որ մի քանի ե- րիտասարդներ այդ քաղաքում մտադրվել են ձեռք

է որ ինքն Արգար Գովհաննիսեան գրում էր թէ պաղկատ (գրական գործիչ) է անում, քանի որ վախենում էր թէ առաջին համարից արդէն այլին կը բողոքէր ու օրինական ճանապարհով դադարեցնել կը տար տպագրութիւնը, եթէ իր ձեռքը հասած լինէր առաջին համարը, որտեղ սկսել էր տպագրվել կոմէդիան։

Սակայն մի րօպէ ընդունենք, որ Պատկանեանի այլին և ընտանեկի հաւատարմատար Զախուշեա- նի բոլոր ասածները սուտ են, իսկ Արգար Գովհաննիսեանի ասածներն են ուղիղ—տեսնենք թէ օրէնքի տեսակէտից ինչպէս պէտք է նայել գրողի մահից յետոյ նրա մի որ և է գրուածը տպագրութեան կատարված իրողութեան վրա։

Վերն մենք ասեցինք. «Ընդունենք մի րօպէ, որ Պատկանեանի այլին և հանգուցեալի ընտանի- քի հաւատարմատար պ. Զախուշեանի բոլոր ա- սածները սուտ են, իսկ Արգար Գովհաննիսեանի ասածներն են ուղիղ»։ Հետեւեալ ինչ կը լինի օրէնքի տեսակէտից։

Այս, ընդունելով, որ հանգուցեալ Պատկանեան 1) չէ զղջացել «Աստուծ» գրելու մասին, 2) չէ փոխել իր կարծիքը պիէսայում առաջ բերած անձնաւորութիւնների մասին, 3) չէ ողջացրել գրուածը ընդգրկել և 4) բնագիրը գտնվում է Արգար Գովհաննիսեանի ձեռքում։

Այդ բոլոր հանգամանքները դարձեալ իրաւունք տալիս են արդեւ Արգար Գովհաննիսեանին ինք- նակամ կերպով հրատարակել գրուածը գրողի մահից յետոյ, իր խմբագրած «Արձագանք» շա- բաթաթիւրով։ անա իրաւաբանական հարց։

երկը ժողովրդական գրքեր և պարբերաբար տա- րածել թէ Զաքարիայում և թէ չըլակայ գիւղե- րում։

Մենք տալանք էլի մի քանի նամակներ դա- նալան անձինքներից, որոնք գործ են ունեցել Արմաւիրի տիրահաշակ դպրոցի հետ, ի պատաա- լան այդ դպրոցի ղեկավարներից ոմանց գրած անմիտ յօդուածներին։ Սակայն մենք միանգամայն աւելորդ ենք համարում տպագրել այդ նամակնե- րը, ըստ որում արդէն պարզ կերպով ապացուց- վեց, թէ ինչ ապօրինի և անարդար վարմունքներ էին թող տալիս իրանց այդ դպրոցի ղեկավարնե- րը, թէ վարձապետների և թէ վարժուհիների գլխին, և թէ նոյն իսկ իզուր տեղը այդքան փողեր են ծախսել դպրոցի դաւաններից սրան նրան ճանապարհածախս տալու համար։ Այլ ես դժուար է թող փչել և արդարանալ զանազան խորամանկ պատրաստակներով։ Հարցը պարզված է և այժմ մնում է միայն, որ հոգեւոր բարձր իշխա- նութիւնը վերջ դնի այդ տեսականկար գութիւն- ներին։

«Новое Обозрение» լրագիրն գրում են, որ հոկտեմբերի 26-ին Երեսու քաղաքային այգում, որը կրում է Արգարի անունը, գտնված է մի երկտասարդ մարդու դէպի։ Երեսու է բոլոր նշաններից, որ երկտասարդը սպանված է եղել։ Դա երեսուցի վաճառականի որդի Բաբասեանն է։ Դատաւարական քննութիւնը սկսված է։

Ներսիսեան դպրոցի վերջին նիստը, որտեղ ո- րոշված է տեսչի հարցը, կայացել է առանց նախագահի։ Կանոնադրութեամբ՝ հաղաբարձա- կան նիստերին պէտք է նախագահէ կամ թեմա- կան առաջնորդը, կամ նրա փոխանորդը։ Թեմա- կան առաջնորդը մնում է, իսկ նրա փոխանորդը, Հատկապէս վարդապետը, Թիֆլիսումն է։ Ուրեմն, ինչպէս է պատահել և ինչն է պատճառ, որ հո- ղաբարձութիւնը նիստ է գումարում առանց նա- խագահի։

Լոյս տեսաւ Կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեան «Труды» 7 և 8 համարները մի տեսակութեամբ։ Այդ համարի բովանդակութեան աշ- քի ընկնող ոչինչ չէ պարունակում։

Արգարի մի գրականագէտ պ. Շէտ, «Զանկ աշխարհիս բոլոր պարբերական թիւերի ա- նունով իր հրատարակութեան մէջ մանրամասն տեղեկութիւններ է հաղորդում նաև հայոց ամա- սիկների մասին, ինչպէս օրինակ «Արեւիկ», «Արեւիկ», «Արեւիկ», «Արեւիկ», «Հաղապէս», «Հանդէս Ամսօրեայի» և «Բիւ- րակի»։

Ամեն սեփականութիւն կարող է լինել կատա- րեալ և սահմանափակված, կամ աւելի լաւ է ա- սիկ սահմանափակված (ограниченное право соб- ственности)։

Բերենք օրինակներ։ Իմ մի բարեկամն պահ է տուել ինձ դիւրեւ մի թանկագին սեղան- ժամա- ցոյց։ Այդ ժամացոյցը, քանի որ ինձ մօտ է, իմ սեփականութիւնն է այն չափով, որ չափով հա- լաւոր է վայելել վերայից աւարկան։ Ես քո- ժում եմ ժամացոյցը, նրանով կապագրում եմ ամբողջ օրվայ անխնայեալ, նա իր գեղեցիկ տես- քով իմ սենեակին ամենազեղեցիկ զարդն է կազ- մում և այլն։ Բանի որ բարեկամն կենդանի էր, նա կարող էր կամ կատարեալապէս ընծայել ինձ ժամացոյցը, կամ հրամայել ինձ ծախել այդ ա- ուարկան, կամ յետ պահանջելով ինքն կարող էր ծախել, կամ ուրիշին ընծայել։ Սակայն մինչև նրա մահը աւարկան մնաց ինձ մօտ և ես էլ վայել- րում նրան։ Բարեկամն վախճանվում է, առանց յիշելու իր կտակում թէ ինձ է ընծայում ժամա- ցոյցը, կամ առատաբալ կտակ էլ չէ թողնում։ Արդեւ իրաւունք ունեւ ես, կամ խղճս կը ներել ինձ, փոխանակ բարեկամիս ժառանգներին աւարկան վերադարձնելու,—ծախել ժամացոյցը փմ օգտին։...

Մի ուրիշ օրինակ. «Հիւսիսային գործակալու- թեան» հեղագիրները ստանում են ամեն օր և Թիֆլիսի Կուրը, և Կուրժօլը, և Աւետարական րանը և վերջապէս լրագիրների խմբագրութիւն- ները։ Բայց Կուրը, Կուրժօլը և Բանը վճարում են այդ հեղագիրներին համար ամսական դիւրեւ 4 կամ 5 րուբլի, իսկ լրագրի խմբագրութիւնը նոյն

մինիստրությունն արժանապատիվ կ'ազատե՝ Զորքերը շարքի օր լինելի ժողովը վճարական նշանակություն կունենայ:

ՎԻԷՆՆԱ, 31 հոկտեմբերի: Քաղաքապետը Յէսարելի ժամանեց Պոնտաֆել՝ առաւօտեան մօտ 10 ժամին, այնտեղ նստեց կայսերական քննարկը և շարունակեց ճանապարհը դէպի Վիեննա, ուր նա հասաւ երեկոյան 8 3/4 ժամին: Հարաւային երկաթուղու կայարանը դարձրած էր: Վաղը առաւօտեան տեղի կունենան ընդունելութիւններ, որից յետոյ Քաղաքապետը Յէսարելի կը նախաճաշէ Էրցհերցոգ Կարլ Լիւդվիգի մօտ, իսկ կէսօրից յետոյ նշանակված է ի պատիւ Նորին Բարձրութեան հանդիսաւոր ճաշ Հոֆբուրգում: Միւս երեկոյան հանդիսանքից հարկ եղաւ հրաժարել, Քաղաքի Օլգա Նիկոլայեւնայի մահան պատճառով:

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 1 նոյեմբերի: Վարչապետը հիմնովում է նախագահի օգնականի պաշտօնը: «Нер. Вѣд.» լրագիրը հաղորդում է, որ պետական խորհրդին ներկայացրած է մի կանոնադրութեան նախագիծ, որով ամեն տեսակ ակցիաներական ձեռնարկութեան ակցիաներին արգելվում է, 100 ռ. տուգանքի սպառնալով, տալու իրանց ակցիաները կողմնակի անձին՝ ընդհանուր ժողովի ժամանակամիջոցում:

Վիեննա, 1 նոյեմբերի: Քաղաքապետը Յէսարելի ժամանեց այստեղ երեկոյան 8 3/4 ժամին: Նորին Բարձրութեանը զինաւորելու համար՝ հարաւային երկաթուղու կայարանում, որը շքեղ զարդարված էր աւստրիական և ռուսաց դրօշակներով և զինանշաններով, եկան կայսրը, զուգորդ Կարլ-Լիւդվիգ, Ֆրանց, Ֆերդինանդ դէ Մետէ, և Վիլհելմ, բոլորը ռուսաց այն զինքերի համադրեաներով, որոնց շնորհիւ են իրանք, այլ և էրցհերցոգներ՝ Ռոյսէր, Ֆրիդրիխ, Յոսէփ և Ալեքսանդր, պրինց Շառլոտթը—Լիւպպէ, և այն անձինք, որոնք նշանակված են լինելու Քաղաքապետի մօտ: Ֆելդմարշալ լեյտենանտ բարոն Ֆելքս Սամադէն, զննապետ Ստոնիկը, իշխան Դիտրիխշտէյն, վերջապէս շատ զինեալներ, ռուսաց զեւպանը՝ զեւպանութեան բոլոր անդամներով, և Պետերբուրգի աւստրո-ռուսական զեւպան կոմս Վոլէնշտայն-Տրաուտմուրգը: Երբ պալատական գնացքը մօտենում էր կայարանին, հսկեց ռուսաց ազգային օրհներգը, և կայսրը արագ կերպով քնաց դէպի վազոն-սալոնը, զինաւորելու այդտեղից դուրս եկող Քաղաքապետը-Յէսարելիին: Կայսրը մեկնեց Նորին Բարձրութեան երկու ձեռք և երեք անգամ համբուրեց նրան, նոյնպիսի սրտազին ընաւորութիւն ունէր էրցհերցոգները ողջոյնը: զգալի կերպով նկատվում էր, որ վերջին անգամ Վիեննայում լինելուց յետոյ, թարմ, ջանքի դէմքը Յէսարելիին, որը փայլուն կերպով կրում էր իր աւստրիական ուղանքի նշանը: Նշանադրեալը, ստացել է այդպիսի գեղեցկութիւն: Յէսարելիը անցաւ պատուաւոր պահակի մօտով, որից յետոյ կայսրը լի էր իր լիակատարութեամբ: Հոֆբուրգում, որը լի էր թագաւորական պաշտօնականներով: Նեմ. ՊՈԼ, 1 նոյեմբերի: Այսօր Մեծ Իշխան Սերգէյ Ալեքսանդրովիչ այցելեց Քաղաքապետը պրինցին՝ Քաղաքապետական պալատում: Ապա պրինցը այցելեց Նոյս Բարձրութիւններին այն հիւրանոցում, ուր նրանք իջանակ են:

Մ. ՊԵՏԵՐԲՈՐԳԻ ԲՈՐՈՍԱ Հոկտեմբերի 30-ին

Լոգոնի վրա	10 ֆունտ արծէ . .	100 ռ.	90 Կ.
Ինքնին վրա	100 մարկ . . .	49 ռ.	50 >
Պարկի վրա	100 ֆրանկ . . .	40 >	10 >
Ոսկի	արծէ . . .	8 >	10 >
Մարտայի կուպոններ		162 >	50 >
Արծաթ		1 >	10 >
Բարապի դիւլոնտեր		4 >	5 1/2 >
Պետ. բանկի 5% օտոմ 1 շրջանի . .	103 >	—	—
— — — — —	2-րդ . . .	103 >	—
— — — — —	3-րդ . . .	—	—
— — — — —	4-րդ . . .	—	—
— — — — —	5-րդ . . .	—	—
— — — — —	6-րդ . . .	102 >	75 >
6% օսկեայ ընդհան	165 >	50 >	—
4% օսկեայ փոխառութեան	—	—	—
Արեւելեան 5% փոխառ. 1-ին շրջ. .	—	—	—
— — — — —	2-րդ . . .	102 >	75 >
— — — — —	3-րդ . . .	104 >	87 >
Ներքին 5% օտոմ փոխառութ. . .	237 >	75 >	—
— — — — —	երկրորդ . . .	216 >	75 >
Պետական երկաթուղային ընդհան .	103 >	75 >	—
4 1/2% ընդհան	—	—	—
5% օտոմ փոխառութեան	94 >	75 >	—
5% օտոմ. թղթ. ադն. կալ. բանկի .	101 >	62 >	—
Ազն. կալ. Պետ. բանկի խաղաղութ. .	191 >	—	—
5 1/2% վկայակ. գրու. հող. բանկի .	105 >	50 >	—
4 1/2% օտոմ փոխառութ. կալուած. .	—	—	—
— — — — —	փոխ. կրեդիտ. ընկեր. մուսայ. .	159 >	25 >
— — — — —	— — — — —	101 >	25 >
Պետերբուրգի քաղաքային կրեդիտ. .	101 >	37 >	—
Երկրորդական օրվապայաններ. .	101 >	—	—
Մոսկվայի քաղաք. օրվապայաններ. .	101 >	—	—
Օրվապայ	101 >	62 >	—
Թիֆլիսի	97 >	87 >	—
Գրաւ. թղթ. Թիֆլիսի կալ. բանկի .	102 >	—	—
— — — — —	— — — — —	102 >	—
Մ. Պետերբուրգի քաղաքային արամադրութիւնը	խաղաղ է:	—	—

Խաղաղութիւնը-Հրատարակող ԳԻՒԴՈՐ ԱՐՄԵՐՈՆԻ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր			
ԷԼԵԿՏՐՈՆ ԳԱՅԱՅԻՆ ՆՈՐ ՀԱՐՈՒՄՆԵՐ			
Ուժի հասցնելը տարածութեան վրա.	ԷԼԵԿՏՐՈՆ ԷԼԵԿՏՐՈՆ	Պոմո սիստեմայի, ուրոնք իրանք իրանց են ուղղում օժուում:	
ՏԵԼԵԳՐԱԿԱՆ ՍԱՐԳԵԼԻ:	ԳԼԵԲՈՎ ԷԼԵԿՏՐՈՆ	Գաղի համար — ածուխից,	
Էլեկտրական նշաններ.	ՐՕՍՏՈՎ (Դոնի վրա)	— — — — —	—
ՋԱՆԳԱԿՆԵՐ	Մեծ Սաղայայ փողոց,	— — — — —	—
ԳԱԼՎԱՆՈՎԱՍՏԻԿԱ.	24	— — — — —	—
Էլեկտրոնի,	ՐՕՏՈՎ (на Дону)	1/2-ից մինչև 120 ձիու ոյծի:	
Ակումուլատորներ, Էլեմենտներ,	БР. ГЛѢБОВЫ	Հոգեմեքենաներ մեծ արագութեան.	
ՀԱՆՐԱՐԳԻՆԵՐ.	Большая Садовая, 24.	— — — — —	—
Նախաշարժներ և ծրագրերի ձրի-արար.		— — — — —	—
(91—№ 5)		91—100 (Կ. շ.)	

ԴԵՂԱԳՈՐԾ Ա. Ս. ԱՐԻՍՏԱԿԵԱՆԻ ՊԱՇՏԵՍ ԵՒ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ Գեղերի, մորթին գեղեցկացնող և հոտաւէտ, նոյնպէս և առողջապահական նիւթերի և անտեսական գործիքների, բացված է կուկիայում, վարժանքի արձանի հանդէպ, բժշկական Նաւասարդեանի առաջին մասն. հիւանդանոցի տակ: (№ 67) 34—100 (Կ. շ.)

ԾԱՆՈՎՈՒՄ ԵՆ ԵՐԿՈՒ ՏՆԵՐ 1. Հաւաքարում, Բոգոլայայ հրապարակի վրա, № 6. հարցնել բաղում, Սերգէյ Գորոբովին: 2. Արտիկերիսկայա փողոցի և Արտիկերիսկայա Բալայի անկիւնում, Բազիլոնայա պատի ղեմաց. հարցնել բժշկ Արտեմիևի Բախարանում, Օլգինսկայա փողոցում, տ. № 14. № 121 3—3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹԱՏՐՈՆ Թ Ի Ֆ Լ Ի Ս Ի Ա Ր Բ Ո Ւ Ն Ա Կ Ա Ն Թ Ա Տ Ր Ո Ն Ո Ւ Մ

Հինգշաբթի, նոյեմբերի 5-ին, հայ դերասանական մշտական խումբը կը ներկայացնէ

ՊԱՐԻՉԻ ԱՂՔԱՏՆԵՐ

Դրամ 5 դործողութեամբ և յառաջանով, թարգ. Փրանսէնցի: Կը մասնակցեն տ.տ. Զարէր Ամիր, օր. Վարդուհի և ուրիշներ. պ.պ. Պետրոսեան, Արէ-լեան, Տէր-Գալեան, Արթուրեան, Ալայեան, Արաքեան, Աւետեան և ուրիշներ: Սկիզբն է 7 1/2 ժամին երեկոյան: Տեղերի գինը սովորական է: Տոմարները կարելի է ստանալ կասսայում:

№ 126 1—2

Լ յ յ ա տ ե ս ա լ

Ժողովրդական ընթերցանութեան համար ՍԱՐԿԱՍԱԿ Թ. ՆԱՋԱՐԵԱՆՑԻ

Նոր աշխատութիւնը

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ՄԿՐՏՈՒԹԻՒՆԸ:

Կարող է օգտակար լինել նաև մեր ծխական դպրոցների 3-ր, 4-ր և 5-ր բաժանման աշակերտներին ու աշակերտուհիներին: Գինն է 8 կոպէկ—50-ով առնողին՝ հատը 7 կոպէկ. 100-ով առնողին՝ հատը 6 կոպէկ: Հանապարհածախսը հեղինակի վրա է:

Դիմել՝ Тифлисъ, Константиновская улица, д. № 3. Дякону Оганнесу Назарянцъ.

1—2 (Կ.)

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ վարչութիւնը յայտնում է, որ իր հրատարակութեամբ մամուլի տակից լոյս են տեսել և վաճառվում են ընկերութեան հրատարակում և կենսարժանական գրականագիտական հետազոտող նոր գրքերը:

№ 47) Հատարի ձեռնարկներ, Պոյոյ մը Պոյոյ թարգման մէջ, Կ. Պարոնեանի . . . 1 ռ. —

50) Ստանալ ծախ, Գարեգին Բաղդ. . . 50 Կ.

51) Ջուրիկի թարգման. Ե. Լալայեանի . . . 25 >

52) Գառնիարակութիւն, Սպեկտակ . . . 1 ռ. —

53) Մրուսան, Շիլլերի . . . 20 >

54) Խան-Միրան, Սէյրանի . . . 20 >

55) Տարա-Բուլբա, Գաօլի . . . 40 >

57) Երկու քոյր, Վ. Ալայեանի . . . 25 >

58) Կրակոտի ընտանիք, Խրիմեան Հայրիկի . . . 60 >

59) Սիրաք և Սամուէլ, Խրիմեան Հայրիկի . . . 50 >

60) Փորձանքների բժշկարան, Բրաքէրի . . . 20 >

61) Մակրիթ, Եւստիպի . . . 50 >

Գրականագիտական կանխիկ վճարելով օգտվում են 20% զեղծով. հանապարհածախսը ընկերութեան վրա է:

№ 126 1—3 (ձ.)

Պատրաստում ենք հայոց ծխական դպրոցների ուսուցիչներին քաղաքային ծխական դպրոցի ուսուցչի կոչումը (звание учителя городского-приходского училища) ստանալու ընտելութիւններ տալու համար: Դիմել Норапенская ул., домъ Гевондянца, № 28.

Արամ Նազարեթեանց, Բրիտանիկ Միքայէլեանց: № 119 4—5

Մի երկասարկ, որը զիտէ տեղական լեզուներ և ռուսերէն, ցանկանում է ծառայել խանութներում կամ փողոցի հրատարակներում: Համաձայն է և օտար քաղաքներ զնար: Ցանկացողները պէտք է դիմեն այս հասցեով. Хлебный переулокъ, № 3. домъ Лобджанидзе. 3—3

Միայն ֆարմակային այդ մարկան կրելով, փախել է համարվում:

Մեղրից և խոտերից պատրաստված մաշկ-կաւարակ և կոնֆետներ

Լ. Գ. ՊԱՏԵ ԵՒ ԸՆԿ. ԲՈՒՍԼԱՆՈՒԻ ՄԷՋ:

Քիմիական լեզուներով և բժշկական փորձերով տպագրութեամբ է, որ այդ պրէպարատները կեն պարունակում առողջարկեան համար որ և է ֆարմակային դրոշմները, և այդ պատճառով նրանց ներքինում և օրտաւան և նրանց այդպիսի ծախելը թողարկված է:

Գինը. շէշ 1 ռ. 25 Կ. և 2 ռ. 40 Կ. կոնֆետները 30—50 կոպէ:

Գրեալով պահեալ Բուստանում Վ. ԱՌԻՍԻԿԻ ԺՈՒ

ՊԵՏԵՐԲՈՐԳԻՈՒՄ. Կոլկովայա 38/19

Վաճառվում է Բուստանի բոլոր գեղարարական և գեղարարական (91—№ 127) 3—12 (10, 20, 30)

Ամենապատիւ ՏԵՐ ՏԵՂԱԿԱՆԻ հաճութեամբ ս. Էջմիածնի ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԱԿԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՅԱՆՉԱՌԱՌՈՂՈՒ Կողմից քննիչ նշանակված լինելով վրաստանի և Իմերեթի թեմի ծխական դպրոցների պատիւ ունեւ ինքրիւ բոլոր այն անձանց, որոնք դպրոցական մի որ և է դործով կամենում են տեսակցել ինձ հետ, որ բարեհաճեն դիմել տեղիս առաջնորդարանը երեկոյան 4—7 ժամը: Իսկ զրաւոր հաղորդակցութիւնները զաւառներէ կարող են ուղարկել մինչև նոյեմբեր ամսի 10 հետեւեալ հասցեով: Тифлисъ, (Епархіальный домъ) члену Ечмиадзинскаго училищнаго комитета Геромонаху Леону. № 118 3—3

ՄՐՈՍԿՎԱՅԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Մ. ԵՒ Ի. ՄԱՆԴԼ

ԹԻՖԼԻՍԻ ԲԱՃԱՆՄՈՒՆԵՐ

(Գործիկանի պրոսպեկտի վրա, տուն Միրիմանեանի)

Պատիւ ունի յայտնելու Թիֆլիսի մեծաբոց հասարակութեանը, որ էժանագին վաճառում վերջնական գներով սեզոնից մնացած աղամարդկանց, կանանց և երեկայոց բոլոր պատրաստի հագուստներ, կը շարունակի մինչև 2-ր նոյեմբերի սոյն թիւի:

ՀԱՆԱՏԱՐԱՄԱՐ ՄՐՈՍԿՎԱՅԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ Ս. Թ. ԴՈՎԼԱԹԵԱՆ

№ 121 5—5